Արձանագրություն N 2

<<ՇՄԱՀ-ՄԾ-ԲՄԱՇՁԲ-21/14>>ծածկագրով գնման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

գ.Ախուրյան <<04>> <<հոկտեմբերի>> 2021թ.

ժամը 15:00

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամները, քարտուղարը գնման մասնակիցները և նրանց ներկայացուցիչները:

Հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հայտարարեց նիստի բացման մասին:

1. «ՇՄԱՀ-ՄԾ-ԲՄԱՇՁԲ-21/14» ծածկագրով գնման հայտերի բացման նիստը անցկացվում է ՀՀ Շիրակի մարզ,գ.Ախուրյան, Գյումրու խճուղի 42 հասցեում, Ախուրյանի համայնքապետարանի երկրորդ հարկի N11 սենյակում:գնման ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:

2. Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտերի գրանցամատյանում գրանցվել է երկու հայտ, ըստ գնահատող հանձնաժողովի հայտեր պարունակող ծրարները կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան.

N	Մասնակցի անունը	Մասնակցի հասցեն	Էլ.փոստ
1	«Վայք Գրուպ»ՍՊԸ	Ք.Երևան,Էստոնական փ. 9,բն28	vaykgroup@mail.ru
2	«Կ.Ս.Վ Շին»ՍՊԸ	Ք.Գյումրի,Ախուրյանի խճուղի 2	ksv-shin@mail.ru

3. Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ՇՄԱՀ-ՄԾ-ԲՄԱՇՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգի համար ներկայացրած բոլոր հայտերը կազմված էին գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Ներկայացրած բոլոր փաստաթղթերը կազմված էին բնօրինակից և մեկ օրինակ պատճենից:

4.Նիստին ներկա անդամների և գնման մասնակիցների համար հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հրապարակվեց հրավերի պահանջներին համապատասխանող մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները:

5. Հրավերի պահանջներին համապատասխանող հայտերով ներկայացրած գնային առաջարկները `

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Գնային առաջարկը /առանց ԱԱՀ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/
1	«Վայք Գրուպ»ՍՊԸ	71749097	86098916
2	«Կ.Ս.Վ Շին»ՍՊԸ	71692944	86031533

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1. Քանի որ նիստին ներկա չէին բոլոր մասնակիցների ներկայացուցիչները, հայտերի բացման նիստից հետո մասնակիցներին էլեկտրոնային ծանուցմամբ հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, ,որը տեղի կունենա 06.10.2021թ.-ին ժամը 15:00-ին, այն կտևի 10 րոպե:

Որոշումը ընդունվել է 3 կողմ, 0 դեմ, ձայներով:

2.Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության, հայտերի գրանցամատյանի, հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված տարբերակները հրապարակում է գնումների էլեկտրոնային տեղեկատուում:

Որոշումը ընդունվել է 3 կողմ, 0 դեմ, ձայներով:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները,ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ Լիպարիտ Տիգրանյան

անդամներ՝ Լյովա Մինասյան

Սամվել Սարգսյան

քարտուղար՝ Անահիտ Յավրումյան